# ԲԱՑՎԵՑ ՄԱՆԿԱՏԱՆԸ ԿԻՑ ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆ

Սեպտեմբերի 24-ին Գավառի մանկատան երեխաների համար բացվեց հանրակացարան, ուր 18 տարին լրացած տղաներն ու աղջիկները կկարողանան մեծ կյանք մտնելուց առաջ օթևան ունենալ:

Գեղեցիկ ու հարմարավետ սենյակներից բաղկացած փոքրիկ օջախում տնօրինների կարգ կապարեց Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանը:

Բարեսիրական այս նախաձեռնությունը հանձն են առել ու բարեխղճորեն իրականացրել CASP-ի անդամները:

CASP-ը Հայաստանի երեխաների հովանավորման ծրագիր է, որի իրականացման համար իրենց ուժերն ի մի են բերել Հայաստանյայց Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի Տիկնանց միության անդամները՝ Ջուլի Աշըգյանի գլխավորությամբ:

Հանրակացարանի բացման հանդիսավոր արարողության ժամանակ մանկատան սաները երախտագիտության խոսքեր ուղղեցին հոգևորականաց դասին, բարերարներին և մանկատան տնօրինությանը:

Հանդիսությանը ներկա էին Գավառի բնակիչներ, հյուրեր ԱՄՆ-ից, ինչպես նաև ՀՀ Սոցիալական ապահովության փոխնախարար Կարինե Հակոբյանը: Նա շնորհակալություն հայտնեց Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչներին և բարերարներին՝ կարևորելով ու բարձր գնահատելով նման ձեռնարկումները:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*